



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՐԻՄՍԻԱՍՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՅԱՅԱՍՏԱՆԻ
 ՆՈՐ ՆՇԱՆԱԿԵԱԼ ԳԼԽԱՒՈՐ ՅԻՊԱՏՈՍ
 ԱՐՄԵՆ ԼԻՆՈՅԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 9 Նոյեմբերի առաւօտուն ընդունեց այցելութիւնը Լոս Անճելըսի մօտ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանի:

Հայրենի դիւանագետը, որ Հոկտեմբերի վերջերուն նշանակուած էր այս պաշտօնին, իր անդրանիկ այցելութիւններէն մէկը կու տար Ազգ. Առաջնորդարան, ծանօթանալու համար Առաջնորդ Սրբազանին ու Թեմի ժողովականութեան ներկայացուցիչներուն հետ:

Հիւր դիւանագետին կ'ընկերանար Հայաստանի հիւպատոս Տիար Յարութիւն Գոճոյեան: Հանդիպումին ներկայ եղան նաեւ Թեմի հոգեւորականութեան ներկայացուցիչներ՝ Հոգշ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան, Արժ. Ս. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան եւ Արժ. Ս. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տիար Կարօ Յակոբեան եւ գանձապահ Տիար Վահան Պզտիկեան, ինչպէս նաեւ Ազգ. Ֆերահեան Երկրդ. Վարժարանի Տնօրէն Տիար Ժան Գոսաքեան:

Փոխադարձ ծանօթացումէ ետք, հայրենի դիւանագետը մօտէն հետաքրքրուեցաւ մեր Թեմի եկեղեցական ու կրթական առաքելութեան մասին: Առաջնորդ Սրբազանը Տիար Ա. Լիլոյեանի հակիրճ բայց ամբողջական տեղեկութիւններ փոխանցեց մեր Թեմի պատմութեան, եկեղեցիներուն, Ազգային Վարժարաններու ցանցին, Առաջնորդարանի հրատարակչական (դասագիրքեր ու հոգեւոր այլ հրատարակութիւններ) եւ քրիստոնեական դաստիարակչութեան բազմաճիւղ ու հետզհետէ ծաւալող գործունեութիւններուն մասին: Ան կարեւորութեամբ անդրադարձաւ նաեւ այն սերտ գործակցութեան, որ ծաւալած է Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութիւններուն հետ, Լոս Անճելըսի եւ Ուաշինթընի մէջ, միաժամանակ վերահաստատելով Ազգ. Առաջնորդարանի զօրակցութիւնը՝ հիւպատոսութեան ու անոր հովանիին տակ տարուող հայրենանուէր բոլոր աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանը անգամ մը եւս շնորհաւորանք ու բարեմաղթութիւն փոխանցեց հայրենի ներկայացուցիչին՝ Հայաստանի Հանրապետութեան 15րդ տարեդարձին առիթով, նշելով, որ իրեն համար բարեբաստիկ առիթ էր Երեւանի մէջ մասնակից ըլլալ հանդիսութեանց ու տօնակատարութեանց, ապա նաեւ՝ Հոկտեմբեր 20ին Ուաշինթընի մէջ, Հայաստանի դեսպանատան կողմէ կազմակերպուած հանդիսութեան:

Գլխավոր հիւպատոսը, իր կարգին, ծանօթութիւններ տուաւ հիւպատոսութեան անմիջական ու հետագայ ծրագիրներուն մասին:

Աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպումը անցաւ մտերմիկ մթնոլորտի մէջ, բոլոր ներկաներուն մասնակցութեամբ: Աւարտին, Առաջնորդ Սրբազանը հայրենի դիւանագետին յանձնեց յուշանուէր մը եւ յաջողութիւն մաղթեց անոր առաքելութեան ու բոլոր աշխատանքներուն:

PRESS RELEASE

PRELATE WELCOMES NEW CONSUL GENERAL OF ARMENIA ARMEN LILOYAN

On Thursday, November 9, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the newly appointed Consul General of Armenia in Los Angeles Armen Liloyan to the temporary Prelacy offices in Encino. This was one of the first official visits of the Consul General, who was appointed in late October, to the Prelacy to meet with the Prelate and Executive Council representatives.

Accompanying the Consul General was Consul Haroutioun Khojoyan. Also in attendance were Very Rev. Fr. Barthev Gulumian, Archpriest Fr. Vicken Vassilian, Rev. Razmig Khatchadourian, Executive Council Chairman Dr. Garo Agopian and Treasurer Mr. Vahan Bezdikian, as well as Ferrahian High School principal Mr. John Kossakian.

During the meeting, the Prelate briefed the Consul General on the history of our Prelacy, churches, and schools, the publications of the Prelacy (textbooks and religious publications), and the endeavors of the Christian Education Department. He also emphasized the collaboration that exists between the Prelacy and Armenian diplomats, both in Los Angeles and in Washington D.C., at the same time renewing his support to the Consulate and their endeavors.

The Prelate then once again offered his best wishes to the Consul General on the 15th anniversary of the independence of Armenia, noting that he was fortunate to be in Armenia at the time to participate in the celebrations, and also in Washington D.C. at the celebration hosted by the Ambassador.

The Consul General subsequently reported to the Prelate the current and future ventures of the Consulate.

The meeting concluded with the Prelate presenting the Consul General with a memento, and wishing him success in his mission.